

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻԻՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

1971-1972 կրթական տարեշրջանին համար Հ. Բ. Ը. Միութեան համալսարանական կրթաթոշակներու բաշխումի պայմաններն են.:-

1. Միութեան այժմու համալսարանական սաներէն 33 հոգի այս տարի շրջանաւարտ պիտի ըլլան: Մնացեալ 188 սաներէն 1971-1972ին կրթաթոշակ պիտի ստանան անոնք որ յաջողած են տարեվերջի քննութեանց մէջ:

2. Վերոյիշեալներէն զատ կրթաթոշակ պիտի յատկացուի սահմանափակ թիւով նոր թեկնածուներու:

3. Կրթաթոշակի այս յատկացումներէն կրնան օգտուիլ արդէն իսկ պաշտօնի վրայ զանազակ ուսուցիչները, երբ անոնք մասնաւոր կերպով յանձնարարութիւն իրենց վարժարաններու տնօրէնութեան կամ հոգարարձութեան կողմէ:

4. Համալսարանական ուսմանց համար թեկնածու ներկայացողները պէտք է անպայման երկրորդական վարժարանէ մը վկայուած ըլլան, այլապէս իրենց դիմումը անպատասխանի պիտի մնայ:

5. Նոր թեկնածուներուն մէջ նախապատուութիւն պիտի տրուի անոնց՝ որոնք հայ մշակոյթին ստատեկու կոչուած ուսմանց կը հետեւին:

6. Բոլոր թեկնածուները, ուսուցիչ թէ ուսանող, Լիբանանի, Սուրիոյ եւ Ֆրանսայի մէջ իրենց դիմումը պէտք է կատարեն մինչեւ Ապրիլ 15, 1971, Միութեան հետեւեալ մարմիններուն.:-

ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

District Committee of Lebanon

P. O. Box 715

Beirut, Lebanon

ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

District Committee of Syria

P. O. Box 348

Aleppo, Syria

UNION GENERALE ARMENIENNE DE BIENFAISANCE

Comite Regional de France

11, Square Alboni

Paris (16e), France

7. Այլ վայրերու թեկնածուներ պէտք է մինչեւ Ապրիլ 15, 1971, ուղղակի դիմեն Կեդր. Վարչ. Ժողովին, հետեւեալ հասցէով.:-

ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

CENTRAL BOARD OF DIRECTORS

109 East 40th Street

New York, N. Y. 10016, U. S. A.

8. Դիմումնադիր ներկայացնողները հարցաթերթիկի մը պիտի ստանան այն մարմնէն, որուն զիմած են: Թեկնածուները պէտք է պատասխանեն բոլոր հարցումներուն եւ հետեւին հարցաթերթիկին մէջ ցոյց տրուած ուղղութեան:

9. Միութեան Լիբանանի, Սուրիոյ եւ Ծրանսայի Շրջանակային Յանձնաժողովներուն Կրթական Յանձնախումբերը այդ վայրերու թեկնածուներուն թղթածրարները ուսումնասիրելէ ետք զանոնք մինչեւ Մայիս 15 պիտի փոխանցեն Կեդր. Վարչ. Ժողովին, արժանաւորներուն մասին պատճառաբանելու յանձնարարութեամբ:

10. Ներկայիս իրենց ուսումը շարունակող Հ. Բ. Ը. Միութեան ունեւոր ընթացիկ գաղութական տարեշրջանի վերջաւորութեան, իրենց քննութեանց արդիւնքը եւ կարգափոխութեան ու շրջանաւարտութեան պարագաները պէտք է անպայման մինչեւ Յուլիս 1 հաղորդեն ուղղակի Կեդր. Վարչ. Ժողովին:

11. Կրթաթոշակ չի յատկացուիր այն նոքր թեկնածուներուն, որոնց վերջին տարուան նիշերուն ընդհանուր միջինը 80 առ հարիւրէն պակաս է:

12. Թեկնածուներուն հայերէնագիտութիւնը եւ ի մասնաւորի հայ վարժարաններէ շրջանաւարտներուն վերջին 3 տարիներու հայերէնի եւ անշակից նիւթերու նիշերը կարեւորութեամբ նկատի պիտի առնուին:

13. Իրենց համալսարանական ընթացքին առանց մեր գիտութեան եւ հաւանութեան ճիշդ փոխող սաները կը դադրին կրթաթոշակ ստանալէ:

Այս յայտարարութիւնը միաժամանակ հրատարակութեան կը տրուի Ամերիկայի եւ արտասահմանի հայ թերթերուն մէջ:

Նիւ Եորք

Մարտ 8, 1971

ԴԻԻԱՆ ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ԺՈՂՈՎԻ

